ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Բահիեհ Ռոստամ Աֆշարի «Թեհրանի կենտրոնում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ, ներկայացված՝ ԺԸ 00.01 - «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ճարտարապետության մեջ ինքնության խնդիրը բարդ և զարգացող հայեցակարգ է, որն արտացոլում է մշակութային, պատմական և սոցիալական ազդեցությունները կառուցապատված միջավայրի վրա և ներդաշնակեցում ստեղծում ավանդույթների գնահատման, նորարարությունների ընդունման և կառուցապատված միջավայրն իրացնող մարդկանց միջև: Ժամանակակից գլոբալացված աշխարհում պատմական քաղաքներում ինքնության պահպանության հարցերը բախվում են նորանոր մարտահրավերների հետ: Հաստատված իրավիճակում հրատապ անհրաժեշտություն է դառնում տեղական ինքնության և միջազգային միտումների ու ազդեցությունների միջև հավասարակշռության պահպանությունը, որին հասնելու համար միջոցառումներ են մշակվում պատմամշակութային ժառանգության պահպանման և քաղաքների կայուն զարգացման ուղղությամբ: Աշխարհի շատ պատմական քաղաքներ, մասնավորապես Երևանը նույնպես առնչվում է այս խնդիրների հետ և պատմական շենքերի հարմարվողական վերաօգտագործման շնորհիվ փորձում է պահել իր ինքնատիպությունը՝ միաժամանակ համապատասխանելով ժամանակակից կենսապայմաններին:

Ինքնության պահպանումը Իրանում նույնպես գերակա խնդիր է դարձել արագ ուրբանիզացիայի և արդիականացման պատճառով, ուստի խիստ արդիական է ու առաջնահերթ ընտրված ատենախոսության թեման: Բահիեհ Ռոստամ Աֆշարին ներկայացված թեկնածուական ատենախոսության մեջ Թեհրանի 12-րդ վարչական շրջանի օրինակով անդրադառնում է ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետահատակագծային հարցերին: Ուսումնասիրության նպատակն է պահպանել և վերստեղծել պատմական քաղաքային լանդշաֆտը Թեհրանի կենտրոնում՝ առաջարկել նոր և հին շենքերի միջև ինտեգրման համապատասխան մոդել, որի միջոցով կարելի է գնահատել քաղաքաշինական գործընթացը:

Ատենախոսությունը բաղկացած է 149 տեքստային էջից, որն ընդգրկում է ներածությունը, երեք գլուխները՝ համապատասխան եզրակացություններով, ընդհանուր

եզրակացությունները, թեմայի հետ կապված 84 անուն օգտագործած գրականության ու հրատարակությունների ցանկերը, ինչպես նաև՝ լուսանկարներ, քարտեզներ, դիագրամներ, աղյուսակներ պարունակող 3 բաժիններից բաղկացած հավելված:

Ներածությունում ատենախոսը հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, խնդիրները, տրվել է աշխատանքի մեթոդաբանությունը, գիտական նորույթը, որը քաղաքի կայուն զարգացման ապահովումն ու ինքնատիպության պահպանությունն է նորացման, վերաօգտագործման, ռեվիտալիզացիայի միջոցով: Ներածությունում ներկայացված է նաև թեմային վերաբերող բավական ընդարձակ գրականության տեսություն:

Առաջին գլուխը, որ վերնագրված է «Ընդհանուր տեղեկություններ Թեհրան քաղաքի տարածքի, պատմական զարգացման վերաբերյալ՝ արդի քաղաքաշինական համատեքստում» բովանդակությամբ տեղեկատվական է, որտեղ ներկայացված են Թեհրանի լանդշաֆտը, աշխարհագրական առանձնահատկությունները, պատմական զարգացման փուլերը, ճարտարապետական ժառանգության ձևագոյացման հանգամանքները, քաղաքաշինական համատեքստն ու արդի վիճակը, ինչպես նաև՝ կառուցապատված միջավայրում առկա հիմնախնդիրները: Պետք է նշել, որ գլուխն իր ծավալով ամենամեծն է, որտեղ կան թեմայի հետ չառնչվող տեքստային՝ մեր կարծիքով ավելորդ պարբերություններ:

Երկրորդ գլխում սահմանվում է քաղաքային ինքնությունը որպես սոցիալական ինքնության համակարգի և ուրբանիզմի համակարգի փոխազդեցության արդյունք: Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ քաղաքի ինքնությունը այն որակական ամբողջությունն է, որը թույլ է տալիս բնակելի տարածքներին դառնալ քաղաք և տարբերվել այլ քաղաքներից: Այս տարբերակումը գործում է միայն քաղաքի սահմանների ներսում և չի կարող իրականացվել առանց քաղաքում ապրելու փորձի: Գլխում տեսականորեն ներկայացված են նաև ինքնության հայեցակարգը ճարտարապետության ու քաղաքաշինության համատեքստում և դրա պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները ներկայիս Թեհրանի քաղաքային լանդշաֆտում:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Թեհրանի 12-րդ թաղամասի ձևակազմությունն ու էվոլյուցիան» ատենախոսության ամենակարևոր մասն է և ներկայացնում է Թեհրանի 12-րդ թաղամասի ձևակազմությունը, պատմական և քաղաքաշինական զարգացումը: Այստեղ դիտարկվում են Թեհրանի 12-րդ պատմական շրջանում գտնվող ատենախոսի

կողմից ընտրված շենքերն ու հուշարձանները, ինչպիսիք են Հասանաբադի ու Թուփխանեյե հրապարակները, Գոլեստանի պալատը: Անդրադարձ է կատարվել նաև պատմական կենտրոնի վերակառուցմանը, պաթոլոգիային և պահպանմանը: Գլուխը պարունակում է Թեհրանի ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանմանն ուղղված ճարտարապետական նախագծման, ինչպես նաև կառավարման ռազմավարությունների առաջարկներ:

Ատենախոսության **ընդհանուր եզրակացություններում** ամփոփված են աշխատանքի հիմնական դրույթները: Ատենախոսը եզրակացնում է, որ Թեհրանի ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանումը խթանում է մշակութային ժառանգությունը, համայնքի համախմբվածությունը, տնտեսական կենսունակությունը, կայունությունն ու ճկունությունը:

Արժևորելով կատարված աշխատանքը և այն դիտարկելով որպես համալիր մեթոդաբանությամբ իրականացված ամփոփ հետազոտություն, կուզենայինք նշել մի քանի նկատառումներ, որոնց հետևելը, կարծում ենք շահեկան պետք է լինեն աշխատանքի հետագա լրամշակման համար:

Ատենախոսության առաջին գլուխը երկարաշունչ է և պարունակում է կրկնվող պարբերություններ:

Երրորդ գլխում Բահիեի Ռոստամ Աֆշարին ներկայացնում է 12-րդ վարչական շրջանի ձևագոյացման ու կառուցապատված միջավայրի շրջանակը, քաղաքաշինական կառուցվածքը, զարգացման ընթացքն ու պահպանության հետ կապված հարցերը և այս համատեքստում անդրադարձ է կատարում ճարտարապետական բնութագրերի, տեղական իրանական պատմական ճարտարապետական ոճերի, ժամանակակից նախագծման միտումների, նշանավոր շենքերի ու տարածքների և ճարտարապետական ինքնության համայնքի ընկալումների վրա: Այս կապակցությամբ ատենախոսի կողմից կատարվել է սոցոլոգիական հարցում: Բաժանվել է 120 հարցաթերթիկ, ստացվել՝ 92: Լավ կլիներ հավելվածում տեսնել այդ լրացված հարցաթերթիկներից գոնե որոշները, չնայած, որ ատենախոսության մեջ աղյուսակի տեսքով ներկայացված են ընդհանրացված տվյալներ: Գիտական հետազոտության նման մեթոդներով իրականացումը պահանջում է նաև վավերացված հարցաթերթիկների տեղադրում:

Երրորդ գլխում ավելորդ ենք համարում Գոլեստանի պալատի ներկայացման ժամանակ ԻԿՕՄՕՍ-ի (i) (ii), (iii) և (iv)չափանիշների մանրամասն նկարագրությունները:

Ընդհանրապես աշխատանքում շատ են թեմայից բովանդակային առումով դուրս՝ նկարագրական հղումները, որոնք խճողում են տրամաբանական շարադրանքը:

Ատենախոսության հավելվածում որպես զուգահեռներ և միջազգային փորձ ներկայացված են հայկական Գյումրի և Գորիս քաղաքների պատմական միջուկները, որոնց անդրադարձ չկա աշխատանքի բովանդակության մեջ:

Ատենախոսությունը խմբագրական շտկումների և եզրույթների նույնական ներկայացման կարիք ունի (օրինակ մի դեպքում էվոլյուցիա է, իսկ մյուս՝ զարգացում):

Եզրակացություն

Ասվածն, իհարկե, չի նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Ներկայացված թեկնածուական ատենախոսությունը ընդգրկուն և ավարտուն ուսումնասիրություն է և Բահիեի Ռոստամ Աֆշարիի «Թեհրանի կենտրոնում ժամանակակից քաղաքային լանդշաֆտում ինքնության պահպանման ճարտարապետանախագծային խնդիրները» համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած՝ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր՝

Լ.Վ.Կիրակոսյան

Լ.Վ.Կիրակոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղար՝

տ. գ. թ., դոցենտ Լ.Հ. Լևոնյան

10.11.2025թ.